ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Կատեգորիա՝ ընթացիկ իրադարձություններ

Հրապարակվել է 29.02.2021-ին

Տեղեկություններ Հայաստանի և Արցախի, ինչպես և Ադրբեջանի միջև իրադրության վերաբերյալ

Բերնդ Ռուդոլֆ

Հայդելբերգ (“Weltexpresso”) – Եվրոպայում մարդիկ կարող էին 2021 թ. նոր տարուն խառը զգացումներով՝ թեթևությամբ, թերահավատությամբ, տխրությամբ, բայց նաև՝ հույսով սպասած լինել: Այնուամենայնիվ, անշուշտ, ուրիշ ոչ մի տեղ տարին փոխվելիս ավելի մեծ վիշտ, ավելի շատ հուսահատություն և ավելի շատ հիասթափություն չի տիրել, քան Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

2020 թ. հուլիսին փոխհրաձգություններ էին սկսվել Հայաստանի և Արցախի (ինչպես կոչվում է Լեռնային Ղարաբաղը պաշտոնապես) ու Ադրբեջանի միջև: Դրանք 2020 թ. սեպտեմբերին վերածվեցին բացահայտ պատերազմի, որն, ի վերջո, ավարտվեց նոյեմբերի 9-ին Ռուսաստանի կողմից միջնորդված զինադադարով: Այդ ժամանակից ի վեր ռուսական խաղաղապահ զորքերը տեղակայված են հակամարտության գոտում: Արցախի Հանրապետությունը ստիպված էր Ադրբեջանին վերադարձնել 1990-ական թթ. սկզբին գրաված տարածքների մի մեծ մասը, ներառյալ՝ վաղեմի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքներ: ՆԱՏՕ-ի գործընկեր Թուրքիան Ադրբեջանի դաշնակիցն էր և վճարեց սիրիացի հազարավոր վարձկանների՝ Կովկասում քրիստոնեական առաջնապոստի դեմ կռվին մասնակցելու համար: Իսրայելն առանց խղճի որևէ խայթի Բաքվի տիրակալին զինել էր անօդաչու թռչող սարքերի ամենաարդիական տեխնոլոգիայով:

Արևմուտքը, որի հետ այնքան մեծ և այնքան զուր հույսեր էր կապել 2018 թ. մայիսին իշխանության եկած վարչապետ Նիկոլ Փաշինյանը, չափազանց շատ էր զբաղված կորոնայով կամ ինքն իրենով, որպեսզի միջնորդական միջամտություն ցուցաբերեր հակամարտությանը: Գերմանիայի կանցլերն ու դաշնային արտաքին գործերի նախարարն արեցին այն, ինչ լավագույնս կարող են անել. Անգելա Մերկելը լռեց, իսկ Հայկո Մաասը գալարվեց, ինչպես օձաձուկը ձկնորսական ցանցում: Գերմանիան ոչ մի դիրքորոշում չորդեգրեց և հավասարաչափ հեռավորություն պահպանեց պատերազմող երկու կողմերի նկատմամբ, մինչդեռ Գերմանիայի համար առնվազն երեք հիմքեր կային՝ միանշանակ Հայաստանի կողքին կանգնելու համար.

Առաջին՝ Ադրբեջանի դեպքում հարցը վերաբերում է երկրորդ սերնդի ընտանեկան տոտալիտար բռնապետության, որտեղ շարունակ ոտնահարվում են մարդու և փոքրամասնությունների իրավունքները: Դրա համար կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, ինչպես օրենքից դուրս հայտարարված՝ ադրբեջանական ազգային բանաստեղծ Աքրամ Այլիսլիի ճակատագիրը, որն իր «Քարե երազներ» վեպի համար, որում նա համարձակվում էր համակրանք արտահայտել հայերի հանդեպ, ենթարկվել է պետական ծանրագույն ճնշումների, կամ 1990-ական թթ. Հայաստանի և Թուրքիայի միջև գտնվող Նախիջևանի ադրբեջանական անկլավում հայկական բոլոր մշակութային արժեքների ավերումները: Հայաստանի դեպքում, ընդհակառակը, հարցը վերաբերում է, բոլոր քաղաքական և հասարակական դժվարություններով հանդերձ, ինքն իր հետ մրցող խորհրդարանական ժողովրդավարության:

Երկրորդ՝ Գերմանիան 2020 թ. իր լռությամբ շարունակեց իր սեփական պատմության անբարո ավանդույթը, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նույնպես Օսմանյան պետության ամենասերտ դաշնակիցը լռել է 1915 թ. Հայոց ցեղասպանության մասին, չնայած Թուրքիայում գերմանացի

զինվորականներն ու դիվանագետներն լավ իրազեկ էին և տեղեկացնում էին Բեռլինի իրենց համապատասխան իշխանություններին: Մարդկության դեմ իրականացված այդ հանցագործությունը հրապարակայնացրել էր ավետարանական քահանա Յոհաննես Լեփսիուսը, որը մի՝ հայ ժողովրդի հալածանքների մանրամասներով մի գրքույկ ուղարկեց բազմաթիվ «մուլտիպլիկատորների», այդ թվում՝ Ռայխստագի բոլոր պատգամավորներին: Ժողովրդի բարձրագույն ներկայացուցիչների կողմից Լեփսիուսի այդ գործողությանը որևէ արձագանք չհետևեց՝ մեկ ուշագրավ բացառությամբ. դա Կարլ Լիբկնեխտն էր, որը 1916 թ. հունվարի 11-ին Ռայխստագում բացորոշ խոսեց հայերի բնաջնջման մասին, ինչի համար պլենումի քրքիջի ներքո ռայխստագի նախագահը նրան զրկեց խոսքից:

Երրորդ՝ այս հակամարտությունում ագրոսորը, միանշանակ, Ադրբեջանն էր, և այս պատերազմի համար հարձակման հրամանը տրվեց Անկարայում, որը

նյութատեխնիկական և պրոպագանդիստական աջակցություն էր ցուցաբերում Ադրբեջանին: Երբվանի՞ց է Գերմանիան համակրում երկրների, որոնք հարձակողական պատերազմներ են վարում: Երբվանի՞ց է Բեռլինը համակրում Ադրբեջանի պես պետություններին, որոնք մահապատժի են ենթարկում ռազմագերիներին:

Փաստը, որ Գերմանիան, հետևապես առաջին հերթին դաշնային ղեկավարությունը և նրա սոցիալ-դեմոկրատական հատվածը՝ արտգործնախարարի գլխավորությամբ, որպես Լեռնային Ղարաբաղի համար իրավասու Մինսկի խմբի անդամ, հեռու է պահել իրեն այս հակամարտությունից և այդպիսով հնարավոր դարձրել աշխարհի հնագույն քրիստոնյա երկրի նկատմամբ երկու մուսուլմանական ագրեսորների և բռնապետերի հաղթանակը, դեռ ծանր հետևանքներ կունենա

Արևմուտքի համար: Բռնապետերի նկատմամբ հանդարտեցման քաղաքականությունը նրանց չի հանգստացնում, այլ նրանց քաջալերում է հետագա գործողությունների, ինչը դեռ կտեսնենք Կիպրոսում, Լիբիայում, Սիրիայում և Հյուսիսային Իրաքում: Ի դեպ, դիվանագիտական խուսափողականության հետևանքները տեսանելի են նաև Գերմանիայում: Ով կարծում է՝ Լեռնային Ղարաբաղը շատ հեռու է մեր՝ կենտրոնական եվրոպական խաղաղասիրությունից և մարդասիրությունից, թող համապատասխան ինտերնետային հարթակներում և սոցիալական ցանցերում կարդա ջարդված գերմաներենով մեկնաբանությունները, որոնցում հաղորդվում էր և հաղորդվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Գերմանական հասարակությունը պետք է շատ սարսափած լիներ Գերմանիայի թուրքական համայնքի որոշ հատվածներում ատելությամբ, դաժան բռնությամբ լի՝ այդ հակաքրիստոնեական և հակաարևմտյան հռետորաբանությունից: Հաջողված ինտեգրացիան, ամեն դեպքում, ուրիշ տեսք ունի:

Իրականում, անհրաժեշտ է պատժամիջոցներ նախաձեռնել Ադրբեջանի դեմ: Եվրոպան պատժամիջոցներ է սահմանում Բելառուսի դեմ և Նավալնիի տհաճ գործից հետո դրանով սպառնում է նաև Ռուսաստանին: Արդեն Ղրիմի բռնակցումից հետո պատժամիջոցներ սահմանվեցին Մոսկվայի դեմ: Պատերազմում ագրեսոր Ադրբեջանը, ընդհակառակը, պետք է անվնաս ազատվի՞: Կարո՞ղ է այդպիսի երկիրը մնալ Եվրոպայի խորհրդի անդամ: Անհրաժեշտ չէ՞ գոնե այս անդամակցությունը դադարեցնել: Բաքվում հաղթանակի տոնակատարության ժամանակ պարոն Էրդողանը հայտարարեց, որ այժմ Թալեաթ փաշայի հոգին կարող է հանգչել

խաղաղությամբ: Թալեաթ փաշան Թուրքիայի կողմից համառորեն ժխտվող՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից մեկն էր: Այսպիսով, այս պահին հայերին մնում է միայն մեկ մխիթարություն. ոչ մի բռնապետ հավիտյան չի իշխում, և կայսերական մեծամոլությունը դեռ երբեք տնականորեն չի հաջողվել: Պատմությունը մշտական հոսքի մեջ է և որևէ վերջնական պատասխան չի ճանաչում: Դրանում կա նաև մի կտոր հույս:

Լուսանկարներ

Վերնագիր՝ Հայաստանի ամենանշանավոր վանքը՝ Խոր Վիրապը, հայերի սրբազան լեռան՝ Արարատի հետ: Արարատը վեր է խոյանում Թուրքիայի տարածքում՝ խիստ հսկվող և ամբողջովին անթափանցելի սահմանի մոտ:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը Երևանի բարձունքում՝ բաժան-բաժան կոթողներով և ոգեկոչման սրահով՝ իր անմար կրակով, որը նվիրված է 1915 թ. ցեղասպանության 1.5 միլիոն զոհերի հիշատակին:

Այցելուներ Ծիծեռնակաբերդի անմար կրակի մոտ:

Ապագան նրանց է պատկանում. հայ դպրոցականների մի խումբ Գորիս քաղաքի մոտակայքում գտնվող Տաթևի վանքում:

Բոլոր լուսանկարները © Բերնդ Ռուդոլֆ